Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 264 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Այլընտրանքային էներգիայի աղբյուր ստեղծելու միջոցով Վանաձորի «Տարոն-4» թաղամասում 2022 թվականին բարեգործական ծրագրի շրջանակներում կառուցված երկու բնակելի տների շահառու ընտանիքների սոցիալական պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Մարո Մարգարյան 12 տուն, ՀՎՀՀ՝ 00141643)
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Մամիկոնյանց 58/Ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 00218098)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լոռու մարզ, Վանաձոր համայնք, «Տարոն-4» թաղամաս, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	2,600,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արմեն Վարդանյանի (ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր, Սեբաստիայի 13) և Լիաննա Վարդումյանի (ՀՀ Լոռու մարզ, Վանաձոր, Սեբաստիայի 13/1) ընտանիքները

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 28-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) 4.6 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային երկու կայանի տեղադրում՝ 2,112,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 28-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում. 2) մեկ հատ էլեկտրական կաթսայի ձեռքբերում՝ 488,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 28-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) 4.6 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային երկու կայանի սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,112,000 դրամ. 2) մեկ հատ էլեկտրական կաթսայի ձեռքբերում՝ 488,000 դրամ (ավելացված արժեքի հարկից ազատում չի ակնկալվում):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ